

ՄԱՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միջին խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէր)
Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԻՒՆԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1899 ՄԱՇԱԿ (27-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՄԱՇԱԿԸ ՀՐԱՍԱՐԱԿՎՈՒԹ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՐՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԱՐ
ԲԱՇԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ԲԱՇԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ երկու և յոթ բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:
ՄԱՇԱԿԻՆՆԱՆ գրվել է արեւելի և ԽՊԱԳՐԱՍԱՆԸ (Բաղրամյան և Բարսեղյան փողոցների անկիւն):
Կարդալիցան ուրիշ թարգմանութիւն «ՄԱՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գրելու հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.
Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:
Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Շ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

Բերդապայի հրամանատար, գեներալ մայոր
Ի Ս Ա Հ Ա Կ Յ Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն Մ Ե Լ Ի Ք - Հ Ա Յ Կ Ա Ջ Ե Ա Ն
Վախճանեց ամսին 2-ին, որի մասին այդի Վարդապետ Թովմաքանը իր որդիներնցով և ազգականներով արդի ցաւով յայտարարեց, ծանօթներին և ընկեր-ծառայողներին: Ամբողջը կը լինի հինգ շաբաթի և ուրբաթ, 4-ին և 5-ին փետրվարի, ժամի 7-ին, 8. Անանեանցիներ տանը, Գոյովնակի պրոսպեկտի վրա. իսկ յուզարկաւորութիւնը կը լինի չարաթ, 6-ին փետրվարի, առաւօտեան ժամի 10-ին դէպի Վաքեր մայր-եկեղեցին:
(չ. ո.) 1-2

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՒՐԱՐ ՓԱՇԱ ԵՒ ՇԱՀՆԱԶԱՐԱՆ ՎԱՐԻՊԱՅԵՑ

Նուպար-Շահնազարեան վարժարանը երկար տարիներ իրարու ջով կցեց եղբայրանայ պետական մարդուն և ուստանայ գիտական վարդապետին անունները: Այս հաստատութիւնը 1866-է 1876 շատ օգտակար եղաւ Քրեանայոց կրթական գործին: Նուպար փաշայի մահուան առթիւ, կարծէ ուրուագծել այդ վարժարանին հիմնադրութեան պարագաները, և խօսիլ այն յարաբերութեանց վրա, զորս Շահնազարեան վարդապետ ունեցած է իր բարեկամին և բարերարին: Նուպար-փաշայի հետ, — հազեղոյս վարդապետին իսկ բաւերով:
Նուպար-փաշա, մեծ իմացականութեան և մեծ զարգացման տէր ինք ալ, միշտ համակրած է իր այն ազգակիցներուն, որոնց ջով դրամ է խելը ու գիտութիւն: Քաջալերած է զանոնք, օգնած է անոնց ի հարկին, և հայ տաղանդներուն առջև միշտ բաց պահած է իր սիրտը ու քաղեր: Ատոնցմէ եղած է նաև Շահնազարեան վարդապետ, որ թրքախոսաւոր, հիւժուած արդէն՝ 1864-ին Ներսիսեան երթալով, նախարարապետին գտած է եղբոր մը հիւրընկալութիւնը: Հոգեւոր վարդապետին կողմէն ալ մէկ տողին մէջ մարդ կը կարդայ այն խորունկ սէրն ու երախտագիտութիւն, զոր փաշան ու իր ընտանիքը ներշնչած են անոր:
Շահնազարեան վարդապետ 1865-ի յունուարին պատրաստած է իր կտակը Քահրէի մէջ: Այդ կտակով ոչ միայն կտակակատար կարգած է Նուպար-փաշան՝ այլ և կտակած է անոր իր հօրմէն մնացած թանկագին մէկ աւանդը: «Մազալաթի Աւետարանը, կը գրէ վարդապետը իր կտակին մէջ, որ իմ ընտանիքէս ինձ մնացել է և որ արդարև յոյժ հազուադիւս է, որովհետև ոչ ինքնիշխան, ոչ Ներսիսեան, ոչ Վենետիկի նմանը չի կայ, որոյ համար ինձ շատ անգամ

1500(“) տալով կամեցան գնել և ես չը կամեցայ մեր ազգէն հանել, Վսեմ. Նուպար-փաշային կը ձգեմ իբր յիշատակ անմոռաց սիրոյ, այն սուլամանա, որ որդւոց որդի իր ընտանիքին մէջ պահէ: Վարդապետը Նուպար-փաշայի կնոջ Յուլիկ հանրմին կը թողու 25 հին դրամներ իբր ամենաշնչին երախտագիտութեան ապացոյց: Եւ իր նամակագրութիւնը ալ օգտը «Պոզոս Նուպարեանին» սիրոյ յիշատակ կը ձգէ որ քանի տեսնէ զինքը յիշէ:
Ինչ գործուրանք, ինչ մտերմական սիրոյ արտայայտութիւն այս տողերուն մէջ:
Սակայն այս կտակը պարտքեր ալ կը դնէ Նուպար-փաշային վրա. Շահնազարեան վարդապետ կը յանձնարարէր անոր վաճառել իր բոլոր գույքերը՝ արծեթեղծիք, ոսկի ուսուփեր, ժամացոյցներ, գիրքեր, և այլն, և զոյցացած գումարը, որ ըստ իր գնահատման պիտի ըլլար հազար անգլիական ոսկի, շահագործել մինչև որ հասնէր 4000 անգլիական ոսկի. ապա զբաղակալին տոկոսը միայն յատկացնել զինքնօրինակ զարդերի մը հաստատութեան, ուր իր անուամբ տասը աշակերտ պիտի պահուէին. այդ աշակերտները եկեղեցական պիտի ըլլային, գաւառային շրջանակներու մէջ գիտութիւն և գրականութիւն տարածելու համար: Հմուտ եկեղեցականներու պատրաստութեան յատկացուելը այս հաստատութիւնը, որ տարիներ ետքը Արմաշի վանքին մէջ պիտի իրագործուէր, երազը եղած էր Շահնազարեան վարդապետի կենսոյնը:
1849-ին, երբ Պոլսի եկած էր առաջին անգամ, սիրելի դաւանաւոր ծառան Յովհաննէս պէյին, համոզած էր զայն կղերական բարձրագոյն վարժարան մը հաստատել, որուն տեսչութիւնը պիտի յանձնուէր իրեն: Սակայն յայտնի է թէ ժամանակին խաւարամիտները հալածեցին լուսնաբոյ վարդապետը, ըողորակաւ սկզբունքներ գտան իր բարոյութեանց մէջ, «Գաշնիկ թուղթ»-ին վրա իր գրածները ընդադատեցին, դատարանի վաւերականութեան մասին իր յայտնած կարծիքները՝ գատափետեցին: Կրօնական ժողով մը գումարուելով 1850-ին, ուր ներ-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Մի համեստ գործ.— Ներսիս ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Մի տասնամեակ վրաց բեմի վրա. Նամակ Շուշուց. Նամակ Ալեքսանդրապոլից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ՎԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.— ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.— ՀՅՈՒՍԵՒՆԵՐ.— ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՒԹԻՒՆ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նուբար փաշա և Շահնազարեան վարդապետ:

ՄԻ ՀԱՄԵՍՏ ԳՈՐԾ
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան օգտին տուած երեկոյթը հանդէս բերեց սիրողներին մի մեծ խումբ, որոնք կարողանում են ոչ միայն ներկայացուցներ տալ, այլ և կոնցերտներ աշողեցնել: Այդ և նախորդ մի քանի փորձերը ցոյց են տալիս, որ մեր հասարակութեան մէջ կան բաւականաչափ անձինք, որոնք հետաքրքրվում են գեղարուեստի այդ մասով, և որոնք անշուշտ ուրախութեամբ կը մասնակցէին մի այնպիսի կազմակերպութեան, որ կը տար առանձին փորձերին ընդհանուր կապ և ուղղութիւն: Այն հիմնարկութիւնը, ուր տեղի ունեցաւ վերջին երեկոյթը, այն է Արտիստական ընկերութիւնը, ինքը տալիս է համակրելի գործունէութեան մի գեղեցիկ օրինակ: Ուստի սիրողները այդտեղ կանոնաւոր ժողովներ են կազմում և մշակել են գործունէութեան մի ամբողջ սխեմա: Նրանք ծանօթանում են թէ հին և թէ նորանոր երեւցող պիւններին հետ և աշխատում են նրանց ներկայացնել սիրողներին աշակցութեամբ: Այդպիսով թէ իրանք զբաղվում են մի թէև համեստ և փոքր, բայց լաւ գործով և թէ ծանօթացնում են ընկերութեան թատրոնը յաճախողներին թատ-

րօնական ստեղծագործութիւնների հետ:
Հայ սիրողները կարող էին հետեւել նոյն օրինակին: Եթէ նրանք կարողանային ձեռնվայ ընթացքում տալ այդպիսով միայն մի տասն ներկայացում, այդ էլ բաւական գործ կը լինի: Հայոց թատրոնը շատ դժուարութեամբ է հարստանում մշտական լուրջ ոյժերով: Մինչդեռ սիրողների շրջանում մենք շատ անգամ պատահում ենք բեմական ձիւք ունեցող անձանց, որոնք կարող էին սիրողների ներկայացուցների միջոցով գործադրել իրանց ընդունակութիւնները և գուցէ ժամանակով բոլորովին իրանց նուիրել բեմին: Նոյնը պէտք է ասենք երաժշտութեան մասին: Սիրողների կազմած կոնցերտներում կարող են ցոյց տալ իրանց արած առաջընթացութիւնները այն օրիորդները, տիկիները և պարոնները, որոնք զբաղվում են երաժշտութեամբ, շարունակում են ուսումնասիրել երաժշտական կրթւոյնների ընթացիկ գործերը և նոր առիթների են կարօտ իրախոյս զգալու դէպի նոր կատարելագործութիւններ:
Սիրողների նախաձեռնութեամբ սկսած այդ գործը առիթ կը տայ թարգմանել բազմաթիւ գեղեցիկ, բայց դեռ անյայտ պիւններ հայերէն լեզուով և խրախուսել մեր հեղինակներին փորձելու իրանց ոյժերը թատերադրական ստեղծագործութեան մի կապի է օգտակար տրամադրութիւնից և սկսել այդ գործի իրագործումը:

ՆԵՐՏԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն
Երէկ մենք, պատասխանելով «Բաղրամյան» հրատարակչին, ասացինք որ ժամանակակից գիտու-
գիւղ՝ ձեզայիլընան Սկրտիչ Ամիրայի դամբարանին մէջ, և իր վարժարանը բացուեցաւ Խաւքանի ձեզայիլընանի տան մէջ, ուր ուսումնասէր և կրթասէր ամիրան ապրած էր այնքան երկար տարիներ:
1866-էն 1876, այս գիշերօթիկ վարժարանը Վ. Պոլսոյ Հայոց ամէնէն նշանաւոր կրթական հաստատութիւնը կը դառնար: 1838-ին Սէրգէրեան Յովհաննէս ամիրայի Իսկիւտարի մէջ հաստատած առաջին գիշերօթիկ վարժարանէն ետքը, որ ժամանակին բաւական կարեւորութիւն ստացաւ իբր կրթական կեդրոն, երկրորդ գիշերօթիկ հայ կրթարանն էր որ կը հաստատուէր Պոլսոյ մէջ: Բոլոր բարեկեցիկ հայերը այս վարժարանը սկսած էին զրկել իրենց զաւակները, հանելով զանոնք եւրոպական զբոսը: Եւստի, ուր օտար կրթութիւն մը միայն կը ստանային: Սիւնի Միլայէնեան, յետոյ Համբարձում Իփեքեան, ինչոյ Մարկոս Աղաբէկեան տնօրէն կրկային վարժարանին, որ քանի մը տարի շարունակաբար կընծայէր ազգին քիչ շատ զարգացած ընթացաւարտներ: Վարժարանին փայլուն օրերուն, Նուպար-փաշա ալ կու գար այցելել այն հաստատութիւնը, որուն հիմնադրութեան մէջ այնքան կարեւոր բաժին ունեցած էր: Սակայն այս բարեկարգ վիճակը շատ չը տևեց: 1876-ին արդէն վարժարանը խանդավարում էր, և քիչ ետքը կը փակուէր, դրամագլուխը բոլորովին սպառուէր: Շէնքը կը մնար միայն, և ան ալ ժախտեցաւ հոսկ ուրեմն քանի մը հարիւր ոսկի՝ որ պատրիարքարանի պէտքերուն յատկացաւ:
Այսպէս ահա կոչնչանար այս կրթական հաստատութիւնը, որ երազը եղած էր Շահնազարեան վարդապետին և որ իրագործուած էր շնորհիւ Նուպար-փաշայի աշակցութեանը: Օր մը անշուշտ այդ վարժարանի պիտի ունենայ իր պատմագիրը, որ պարզէ անոր փակման պատճառները և պարագաները՝ ապագայ սերունդներու առջև, պատասխանատուութիւնները ճշդելով:
Հրատմ. Ասատուր
«Արեւել»

Типографія Грузинск. Издат. Т—ва, Дорисъ-Мелик. ул. № 13.